ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԸՆԿԵՐ ՃԱՀԱՃԱՐ

ՏՊԱՐԱՆ ՄԱՍԻՍ - 208bis ԼԱՖԱՅԷԹ ՓՈՂՈՑ - ՓԱՐԻԶ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԻԱՆ

ԸՆԿԵՐ ՇԱՀԱԶԱՐ

(ԵՐԳԻԾԱՎԷՊ)





ՓԱՐԻԶ
ՏՊԱՐԱՆ ՄԱՍԻՍ
1927



ՂԱՅԱԿԱՆ յիշատակներուս թանգարանին մէջ անտուկ մը ունիմ: Անտուկիս մէջ կան յեղափոխականներ, բանաստեղծներ, վարժապետներ, եպիսկոպոսներ ու... անտես աղբար-ներ: Ամէնքն ալ առաւել կամ նուազ խամաճիկներ ու խաչադողներ: Ամէնքն ալ բազմավաստակ մխոս-ներ : Չիմակ յոգնած, հինցած ու անտուկիս մէջ քնա-ցած: Հանգի՛ստ: Ատեն մըն է սակայն մէկը այդ խեղ-կատակներէն արթնցած է իր քունէն ու իր դլուխը կը զարնէ անտուկիս կափարիչին, ոտքերը յատակին ու ձեռքերը կղպանքին: Մանաւանդ բոցաշունչ ճա-ռեր կը խօսի և վախ ունիմ որ ամբողջ քնացողները ոտքի հանէ: Պատեռա՛զմ այն ժամանակ: Որպէսզի այդ աղէտը չպատահի՝ կը բանամ անտուկս և ան-հանդարտ լարախաղացս դուրս կը հանեմ: Այժմ ուրախ է, ահա, ու կը ճառէ խանդավառ.

— Ընկերնե՛ր, լոյս եմ բերել... Քառասուն վարա, երկու դրուշ, հարիւր վարա... փողի համար չէ, զա-ղափարի համար... Կեցցէ՛ Սօցիալիզմը, Եղսօն, Ջա-մալը... Վաթսուն վարա... Անկցի՛ բուրժուազիան... Հարիւր վարա... Փողի համար չէ, զաղափարի համար:

*
* *

Ներկայացնեմ իր սարօքն ու վառօքը այս խեն-թուկս, որ թէեւ խաչադող ու զրպանն ալ փողով լեցուն, սակայն իր շահատակութիւններով շահե-կան է:

Իր հասարակ անունն ու մականունը չեմ դիտեր, սակայն իր հասարակական կեղծանունն ու մակդիրն է «Ընկեր Աշուղ Շահազար»։ Դժբախտաբար խորունկ տեղեկութիւններ չեմ կրցած քաղել իր բազմաբեղուն անցեալէն։ Գիտցածներս հետեւեալներն են։

Աշուղ Շահազար ծնած է Վան, 1876 թուին, Մարտի մէկին։ Իր խանձարուրին մէջ անիկա նման էր կատուի։ Աւելի ճանկ նետեց քան հասակ։ Տասնեքուս տարեկանին նախակրթարան։ Մինչեւ չորրորդ կարգ բարձրացած է եւ տեսնելով որ դպրոցին մէջ ո՛չ սիրահարութեան, ո՛չ արկածախնդրութեան, ո՛չ իսկ բանաստեղծութեան մասին խօսք չ՚ըլլար, պատռած է ուսուցիչի մը գլուխը ու հեռացած այդ բանտէն։ Անմիջապէս կեանքի համալսարանը նետուած է՝ իր բնածին տաղանդին համար անհրաժեշտ մասնագիտութիւնները ձեռք բերելու։ Առաջին գործը եղած է երթալ ծովափնեայ Աւանց գիւղը և երկու էշ գողնալ։ Այդ էշերը, նշանաւոր իրենց կայտառութեամբ, ծախած է, սատկած էշու դինով, Շամիրամայ թաղին թուրքերէն մէկուն։ Գրպանած դրամով, իր ընկերներուն հրաժեշտի հացկերոյթ մը սարքած է, Ուրբաթ Առու զբօսավայրին մէջ։ Այնտեղ իր ընկերները տաքցած ու կիսովին մերկացած են։ Ինք գողնալով հագուստ-կապուտանները շունչը առած է դարձեալ Շամիրամայ թաղ, վաճառականութիւն ընելու։ Քանի մը շաբաթուան մէջ անուն ու համբաւ շինելէ վերջ, գացած է Վարագայ Վանք։ Վանականներուն առաջարկած է իր թեկնածութիւնը որպէս վարդապետ, պայմանաւ որ իր սիրական խորոտիկ աղջիկը իրեն տրուի, իբրեւ կին կամ սպասուհի։ Անոնց կոպիտ մերժումին վրայ՝ խորանէն խաչ մը գողնալով փախած է Կարմրուրի վանքը, իր առաջարկը կրկնելու, գողցած խաչն ալ նուիրելով այս վերջին վանքին։ Վարդապետները դինքը բռնած, մերկացուցած ու Ապրանքեան աղբիւրին մէջ խոթած են։ Ահաւոր կատաղութեամբ աղբիւրէն դուրս է ցատքած, հագուստ

ու եկեղեցիին քշոցով՝ մինչեւ այդինեղուն մէջ փախ-
ցուցած է «սեւաւորներու երամակը»: Անցած է Ս. Գրի-
գորի վանքը և հոն առաջին անգամ դէմը ելլող ա-
մաւորը տփած, իբրեւ վրէժխնդրութիւն: Անկէ Շահ-
պաղի: Գիւղին մէջ քանի մը օր ապրած իբրեւ դբօ-
սաշրջիկ: Սիրահարուած տանուտէրի մը տանեքե-
տարեկան աղջկան: Կիրակի օր մը հաւաքած է գիւ-
ղին լակոտները ու հրաւիրած «ազգային ժողով»ի:
Տակառ մը գինիով բացած է նիստը և առաջարկած
փախցնել տանուտէրին աղջիկը, Սիրօն: Ժողովակա-
ները միաձայնութեամբ հաւանութիւն յայտնած են:
Հետեւեալ օր Սիրօն, կապ իշու մը վրայ և սիրահարին
գրկին մէջ, փոխադրուած է Շամիրամայ թաղ: Մեր
պզտիկ հերոսը դեռ շունչ չառած բռնուած է երկու
կարիճներու կողմէ ու տարուած Մ'հերի դուռ, ճաշա-
կելու փառաւոր ճեմ մը: Այդ ճեմէն բաւական դաս-
տիարակուած՝ թողած է մարդիկը ու ինկած կենդանի-
ներուն, պտուղներուն ետեւէն: Սարսափելի չարդ մը
տուած է Վանայ ծովուն տառեխներուն և Վանայ
քաղքին կատուներուն: Փայտէ սուրով մը, դեռինները
փոած է Աբտամետի խնձորներն ու ճգմած այդինեղու
խաղողները: Երկրորդ ճեմով մը գտած է իր ճամբան:
Հովուերգութիւններ սկսած է գրել Այգեստանի աղ-
ջիկներուն համար: Ոտանաւորի մարզանքը իր հոգին
ընտանեցուցած է: Վանայ կուսանք սկսած էին նայիլ
իրեն, նայիլ հիացիկ ակնարկներով: Սամսոն ու ա-
խաւակ, այսինքն քալ ու քերթող միանդամայն: Փո-
քրիկն Շահապար կրնար գոհացնել հին կինը, այժմ
պաշտամունքը ունեցող, և արդի կինը, իմացականու-
թեան պաշտամունքը ունեցող: Եւ վանանոյշներուն
մէջ այդ երկու կիները ներդաշնակօրէն խառնուած
էին իրարու: Դէպք մը սակայն պատճառ եղած է որ
փշրուի իր համայքը: Օր մը, տանիքի մը վրայ, երբ
սիրային քերթուածներ կ'արտասանէր աղջնակի մը,
կից մը կերած է իր յետոյքին՝ սիրուհիին եղբօրը
կողմէ ու ինկած փողոց: Ատկէ իր կաղութիւնը: Այդ

կարողութիւնը սակայն օգտագործել պիտցած է ան: «Բիշնէվում երբ գեներալ Տուտուկինի տէրօրը կա-տարում էի՝ մի շուն քօղաքի գնդակը ոտս մտաւ»: Ոտքի ելլելէն քանի մը օր վերջ, յանուն վրէժի, կրակի տուած է իր սիրուհիին հարուստ հօր ամբողջ տունն ու տեղը ու փախած Կովկաս, իր հօրենական տունը կողոպտելով: Ռուսական արեւու տակ իր ապ-րած կեանքը վիթխարի մթութեան մէջ է: Այսքան պիտենք որ «ընկեր» եղաւ ու պարզացուց իր մասնա-գիտութիւնները, ըլլալով սոցիալ-դեմոկրատ, հասա-րակական գործիչ, հեղինակ, հրատարակիչ, հռետոր և... շրջուն դրամաճառ:

*
* *

Օսմ. Սահմանադրութեան արտերուն մէջ բուսաւ ու աճեցաւ սակայն այս ծաղիկը, քօքլիքօ՛, և մեկէն ատացաւ թո՛յր, բո՛յր, թե՛ւ, ձե՛ւ: Թոյրը կարմիր էր, նման իր փողկապին, թոքի պէս կարմիր: Բոյրը փամ-փուշտի էր, իր դրպաններուն նման մէջը պարապ: Թևեն ու ձևեն ալ առնուազն փոթորիկ:

Ունէր տպուած ու անտիպ երկասիրութիւններու անհամար շարք մը, զարմանապան նիւթերու շուրջ: Իր գրքերը, «բրօշիւրներ»ը, մեկ Փօրման՝ 16 էջը չէին անցներ ընդհանրապէս: Կուռ, սեղմ ու յանդուգն գրող էր: Իրեն մի շունչ բաւ էր, որեւէ նիւթի վրայ, նայած պահանջին, լեցնելու տասնեակներ էջ: Ամէն նիւթի վրայ կը պարէր, նիւթը ճզմելով ու հիւթը հանելով: Կը պարէր ոգեւորուած, մազերն ու փողկապը — քիչ մըն ալ ուղեղը — յանձնած հովերուն: Ու իրրեւ գրա-կանութեան ստեղծագործ ֆապրիքա կ'արտադրէր ե՛ւ ռամանաւորներ, ե՛ւ վէպիկներ, ե՛ւ թատերախաղեր, ե՛ւ երգիծանքներ, ե՛ւ ճառեր, ե՛ւ մաթեմաթիկա, ե՛ւ հասարակագիտութիւն, ե՛ւ խոհարարութիւն...:

Առաջին անգամ բախտը ունեցած եմ տեսնել ընկերը Բերա, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ, կիրակի առաւօտ մը, իր գրքերը շարած գետինը, սալաքարերուն վրայ, պատին տակ: Անիկա ոչինչով

նման էր տեղացի սովորական մահկանացուներուն։ Անիկա ներածուած դիք մըն էր։ «Մի ըմբոստ սիվիլիզացիայի սինվօլ»։ Ես պզտիկ վերացեալ մըն էի ու վայրկեան մը բաւական եղաւ որ յափշտակուիմ այս «ինտելիգենտ» գործիչով։ Մօտեցայ իրեն ու իր դրքերուն։ Ինչ հանճար։ Իր արտաքինն ու ներքինը մէջտեղը, մարմարիոններուն վրայ։ «Մի տարերային աֆօթիէօզ»։ Հագած էր սեւ դգեստ մը, օծուած յաւիտենականութեան իւղով։ Շապիկ ու օձիք՝ ձերմակ անցեալով։ Ծովահէնի լայնեզր գլխարկ ու անապատականի մազեր։ Իր ոտնամաններուն նման էին վանայ ծովուն հնադարեան լաստերուն։ Ունէր կապկային գլուխ։ Տարվինիզմի չախչախիչ փաստ մը։ Ունէր Վանայ կատուի գոհար աչքեր։ Ունէր նաեւ շիկահատու ձայն, խոզի վիզ ու սիրամարգի պոչ — իր եռեւ փռուած դոյնզգոյն գրքերը —։ Ընկեր Շահազար նիցչէական դերմարդ մըն էր՝ կենդանական աշխարհին խառնուրդովը ստեղծագործուած։ Ունէր բիւրածալ ուղեղ մը, եռացող ու փրփրացող իր գանկի կաթսային մէջ։ Մարքսիզմը հոն ապուր մը խառնելու վրայ էր։ Իր աղիքներն անգամ լեցուն էին կայծակներով, այդ պատճառով ստիպուած էր բոց ու կայծ ժայթքել։

Ս. Երօրդութիւն եկեղեցւոյ շրջափակը կատարեալ ճեմարան է կիրակի առաւօտները։ Խումբեր յոտնկայս ու շարժուն, մեծ խումբ մըն ալ Աշուղին շուրջը։ Շահազար ժամանակը եկած համարեց։

— Ընկերներ, բարեւ եմ բերել ձեզ Մասխէց։ Մոսկվայէց եմ անցել։ Կուլտուրական արեւ եմ բերել։ Արեւի պէս էժան։ Մարքսի, Էնգելսի, Լիբքնէխտի մարգարիտները ձեր ոտ առաջ եմ նետում։ Կարծում եմ որ խոզեր չէք ու կը գնահատէք ինձ։ Ես փողի համար չեմ աւում, սօցիալիզմը վկայ, փողի համար չեմ խօսում։ Փողն ի՞նչ է.— ձեռքի կեղտ։ Փողի համար չի, պաղափարի համար։ Օգտուեցէ՛ք առիթից, օգտուեցէք գրքերից։ Վերցրէք մի բրօշիւր։ Մ՛յ, օրինակ, «Ժողտակուած քնար»ը, երկու պօէմա, դեմոկրատ ոճով

պրուած։ Կարդացէք մանաւանդ «Իմ պատգամը Աշխարհին», Կոմս Լեվ Տոլստոյի յառաջաբանով։ Վերցրէք «Մի կայծակ», իմ յանդուգն յառաջաբանով, մի ցնցող վէպ՝ ռուս յայտնի պրող Մաքսիմ Գորկիի։ Չմոռանաք առնել «Ընկերուհի Անուշկա»ն, մի գեղեցիկ գործ, ես նրա հետ անցեալ եմ ունեցել, քաղցր յուշեր, թանգ չի, վաթսուն փարա։ Եթէ ուզում էք վերցրէք «Ընկերուհի Մաշայի Սիրեկանը», պարսկական կեանքից, յուզիչ դրամա, յօդուտ Ազատութեան։ Շատ պէտքական կը գայ «Դարիպի խոհանոց»ը, մի քաղորդ դարու փորձառութիւն, յեղափոխական կերակուրներ, սոցիալիստական ապուրներ, կենդանական խաոնուրդ, ստեղծագործուած ռուսական բօրչ, պարսկական բիլաֆ, հոսհոսանների թօփիկ ու տօլմա, խմորներ, քաղցրեղէններ։ Մի սոված ընկերոջ կուշտ յառաջաբանով։ Վերցրէք «Մօլլա Նասրէտտինն մեր օրերում»ը, «Իմ օգուտը ռուս յեղափոխութեան»ը, սա պրուած է ռուս յայտնի տէրօրիստ Իվան Վլատիմիր Ալէքսիէֆ Նիքօլաէվիչի համակրական սպառնալիքով։ Կարդացէք իմ «Մաթէմաթիկա»ն, ինժիներ տեխնօլօգների հարկաւոր։ Ընկերնե՛ր, եթէ ուզում էք մարդ դառնալ, առէք սրանից էլ, «Ընկեր Քրիստոսը և Սպարտայի Կրօնը», մի յանդուգն հարուած Հռոմի Պապի դէմին։ Էժան են, էժան։ Վաթսուն փարա, երկու դրուշ, հարիւր փարա։ Փողի համար չի, գաղափարի համար։ Վերցրէ՛ք, օգտուեցէ՛ք, եթէ ուզում էք մարդ դառնալ։

Ու հասարակութիւնը «կը վերցնէր գլխից» մարդ դառնալու համար։ Ճարպիկ կապիկ Շահապար ալ կը վերցնէր փողերը մարդ դառնալու համար։ Մարդս մարդով մարդ կ'ըլլայ։ «Փողի համար չի, գաղափարի համար»։ «Կեցցէ՛ Սօցիալիզմը»։

Երբ գնորդներու չերմութիւնը պաղէր ու միայն չէզոք հանդիսատեսներու գաղջութիւնը մնար՝ Աշուղը կրկին մի կրակոտ ճառի անհրաժեշտութիւնը կը զգար ու կը բղաւէր.

— Ընկերնե՛ր, բոլորը յայտարարում են որ հոսհոս Պոլիսը մի շաբաթուայ ընթացքում յեղափոխուել է

էս բրօշիւրներով։ Վերցրէք, ասում եմ, մասնակցեցէք օրուայ մեծ էւօլուցիային։ Բոլոր մասսաները, բոլոր պրօլէտարները մի տենդենցիա ունեն, սպէկուլանտ բուրժուայի դէմ լաւ զինուել։ Չի կարելի գտնել աւելի ուժեղ պօմպա քան իմ գրքերը։ Վերցրէք։ Երկու ղրուշ, հարիւր փարա։ Փողի համար չի, գաղափարի համար։ Հնչում է զանգը բանւորական սուրբ դիկտատուրայի, բանուորական սրբազան իմբէրիալիզմի, մտէք ճանապարհի մէջ ու դէպի դրախտ... Վաթսուն փարա, երկու ղրուշ... Անկցի՛ բուրժուազիան, անկցի մատերիալիզմի խաւարը, կեցցէ՛ Դեմօկրատիան, կեցցէ՛ Մարքսի կուլտուրան։

* * *

Երկրորդ անգամ տեսայ զինքը դաշտահանդէսի մը մէջ, ծառի մը տակ, իր գրքերով և անխուսափելի ճառերով։ Գործը կարգին էր, բազմաթիւ օրիորդներով շրջապատուած էր ու հասած խանդավառութեան ու փառքի գագաթը։

— Ընկերուհիներ, հարկաւոր է ձեզ ծանօթանալ սիրոյ էւօլուցիայի հետ։ Կովկասեան այգիներում, Կախէթի յեղափոխող գինիով, սազանդարների շըրջանում, չէրքէզկա հագնուած, Տաղստանի պարերով մենք սիրաբանութիւն էինք անում մեր գաղափարական ընկերուհիների հետ։ Այնտեղ էր և՛ Սօնան, և՛ Մաշան, և՛ Մարօն, և՛ Եղսօն։ Մեռնեմ ես նրանց հոգուն։ Աշուղը մատաղ լինի գեղեցիկ Սօնայի համար։ Այդ սէրերը մեզ տալիս էին պրոլետարական ըմբոստ ներշնչումներ և մենք դառնում էինք հերոս, տէրորիստ, բանաստեղծ, մի մի առաքեալ։ Փողի համար չի, գաղափարի համար։ Ընկերուհիներ, հեռու կացէք Պոլսի հոսհոս պարոններից։ Նրանց համբոյրը կեղտ է։ Դեմոկրատների գիրկը բացւում է ձեզ համար, էդ գրկի մէջ դուք կը գտնէք նոր տեսակի հաճոյքներ, դրախտի մեղր։ Էդ գրկի մէջ մտնելու համար վերցրէ՛ք էս գիրքը՝ «Ընկերուհի Անուշկա», մի պօէմա, մի վիթխարի գլուխ-գործոց, վաթսուն փարա, փողի

համար չի, պաղպաղարի համար: Վերցրէ՛ք, օգտուեցէ՛ք: Կրկնում եմ՝ փողի համար չի: Երկու դրուշ, փողի համար չի, հարիւր փարա, պաղպաղարի համար: Անկի՛ հոսհոսիզմը: Անկի՛ բուրժուազիական հոսհոս սէրը: Անկի՛ խոզերի ճահիճը: Կեցցէ՛ դեմօկրատների սիրոյ պրոցէսը: Կեցցէ՛ սիրոյ մարքսիզմը: Կեցցէ՛ աշխատաւորական դրախտը: Վերցրէ՛ք: Օգտուեցէ՛ք: Վաթսուն փարա: Փողի համար չի. փողն ի՛նչ է — ձեռքի կեղտ: Պաղպաղարի համար: Վաթսուն փարա:

Գործը «հօլա էր գնում»:

Այդ օր լաւ առուտուր ունեցաւ: Մանաւորապէս ծախեց — «փողի համար չի, պաղպաղարի համար» — «Խորտակուած Քնար» և «Ընկերուհի Անուշկա», «անցեալի քաղցր յուշերից»: Իր դրպանը լեցուեցաւ «պաղպաղարի համար»:

* * *

Երրորդ անգամ տեսայ այս հերոսը Դալաթիա, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Յառաջդիմութի՛ւն:

Ածիլուած էր ու թողած փոքր «միրուք»: Նոր ու փայլուն կօշիկներ: Գրքերը բարձրացած էին փոքր սեղանի մը վրայ և անոնց փոխադրութեան համար երկու պայուսակներ: Աշուղը մահացած ու Շահազար անմահացած, շահի նման: Կոկորդը խեղդուած: Երկու ոսկիներ թաւած էին իր առջեւի ժանիքանման ակռաներուն վրայ: «Կեղտոտ բուրժուայ»ի մի մաքուր արծաթ ժամացոյց ալ իր տաղանդաւոր փորը կը պըսակէր, կախ շղթայով: Այս բոլորը ոչինչ: Յառաջդիմութի՛ւն, այո՛: Ընկեր Աշուղ Շահազար իր քով ամասականաւոր պաշտօնեայ ունէր, Չամալը:

* * *

Չամա՛լ...

Օսմ. Սահմանադրութեան արտերուն մէջ մնկուեցաւ այս խրտուիլակը: Թիֆլիզէն, Հալաբարցի: Չա-

մալ Իվան Տէր Թաթոսեանց ունէր մէկ մէթր իննսուն պարթեւ հասակ, որուն վրայ աւելցնելով իր 30 սանթիմէթրի հսկայ բաբախան ալ, կ'ունենայիք երկու մէթր քսաննոց ցից մը՝ զուրկ լայնութենէ: Ընկեր Ջամալ իր անլայնք երկարութեամբ նման էր հիւծախտաւոր Բելի մը կամ կախ Գողիաթի մը: Քալէի հովեր ունեցող և սակայն պզտիկ հովէ մը շարժող: Ոխերիմ ատելութիւն մը ունէր բուրժուաներուն հանդէպ, և մոլեռանդ պաշտամունք մը սօցիալ-դեմոկրատներուն, նոյնիսկ եթէ անունք պինքը անօթի ձգելու աստիճան շահագործէին:

Ընկեր Ջամալ՝ համալ էր:

Ջամալի պաշտօնն էր, Աշուղին քով, պրքի բեռնակրութիւն, առուձախի ժամանակ կողմնակի պրօպագանդ և սիրոյ միջնորդ:

Ընկեր Ջամալ իսկական ընչազուրկ էր: Ան իր «չիզմէից» և «բաբախից» դատ «մի տեղ չունէր» իր գլուխն ու ոտքերը հանդչեցնելու: Աշուղը գայն դատած էր «մի խանի սրճարանի պրոլետարական անկիւնից»: Աշուղը Ջամալով լոելեայն կը պարծենար: «Կարդին մարդ եմ եղել, մարդ եմ աշխատցնում ու... շահագործում»:

Ջամալ անուշիկ, ապուշիկ, լօթի մարդ մըն էր, հաղիւ քառասուն տարեկան: Հաւատացած էր ընկեր Շահազարի անցեալ անգոյ գործունէութեանց և յափըշտակուած: Աշուղին ճորտն էր: Աշուղը տղրուկի նման ինկած էր Ջամալին վրայ ու կը ծծէր անոր արեան վերջին կաթիլները: Ջամալ երջանիկ էր սակայն: Եռանդով փարած էր իր գործին, եռանդով ու հպարտութեամբ: «Ախօ՛ ամէն աշխատաւոր չի կարող ծառայել մի վեթերանի մօտ»: Ու առաքեալի հաւատք մը կար իր պրօպագանդին մէջ.

— Սխալ գնեցէ՛ք ընկեր Շահազարի գրքերից: Էսօր կայ, վաղը չկայ: Մնայ էլ կը թանգանայ: Մի կեղտոտ վաճառականի հարիւր հատ ուզում է, բայց ընկերը չի տալիս: Նա փողի համար չի աշխատում, դաղափարի՛

համար: Կովկասում նա մեծ անուն ունէր: Վերցրէ՛ք: Վաթսո՛ւն փարա, երկո՛ւ դրուշ:

Ու գնորդի մը.

— Այստե՛ղ եկ, քեզ մի բան ասեմ. քսան փարա աւելի վճարիր ընկեր Շահապարին և խնդրիր որ սատրապրի. թերեւս չի մերժի: Նրա սատրապրութիւնը տասկի արժէ:

Աշուղը Ջամալին ամսական որոշած էր 1000 դաղափար և 120 դրուշ: Սակայն այդ 120 դրուշն ալ ամբողջովին չէր ստանար ան: Աշուղը 40 դրուշ կը պեղչէր սենեակի վարձք անունով, որովհետեւ Ջամալ կը պիշերէր Աշուղին սենեակին գետնին վրայ: Սենեակին իրական վարձքը արդէն 40 դրուշ էր, ու Աշուղը արդարի քուն մը կը քնանար հոն՝ ձրիօրէն: «Ջամալ Չան»ին կը մնար ամսական 80 դրշ.: Օր մը Շահապար տեսնելով որ «Ջամալ ընթերցումով օգտուում է դրքերից», որոշեց 10 դրշ. նուազ վճարել ամսական և Ջամալի երեսնօրեան անուանական 120 էն 70 դրշ.ի իջաւ: Ջամալ սակայն անտրտունջ ընդունեց ասլ:

Անգամ մը աւելի շահաւոր գործ մը գտաւ ու բուռն կերպով մերժեց:

Էֆէնտի մը, Բարեգործեան անունով, օր մը Ջամալին ըսաւ.

— Ի՞նչ կը վաստկիս առ Շահապարիդ քովը:

— Բո բանը չի: Իմ ընկերն ու ես փողի համար չենք աշխատում, գաղափարի համար:

— Մարդ Աստուծո՛յ, քեզի ամսական 200 դրուշ տամ, եկուր չէնքով շնորհքով քովս աշխատէ: Առ Շահապարդ քեզ անօթի պիտի սատկեցնէ:

— Բեզ ասացի, քո բանը չի: Ազդարարում եմ քեզ յարգանքով խօսել ընկեր Շահապարի մասին: Նա քեզ նման կեղեքող չի, նա աշխատում է գաղափարի համար:

— Է՛, թամա՛մ պուտալա ես եղեր: Ան գաղափար մաղափար ըսելով ճէպին կաղապարը կ'ուտեցնէ կոր:

— Լռի՛ր, կեղտոտ բուրժուա: Քո բանը չէ: Ընկեր Շահապարը եթէ լսէ, քեզ տէրօրթ կ'ենթարկէ:

Ջամալ իր այս խօսակցութիւնը պատմեց ընկեր Շահազարին.

— Ընկեր Շահազա՛ր, ճանաչո՛ւմ ես, չէ՞, Բարեդործեան էֆէնտին. էդ կեղտոտ բուրժուան ասում է — Ես աշխատիր իմ մօտ, լաւ փող կը ստանաս: Ղալամաղալ բարձրացրի, ասացի մենք գաղափարի համար ենք աշխատում, կորի՛ գնա՛, թէ չէ ոեխդ կը չարդեմ: Խաթաբալա՛:

— Հազար ապրի՛ս, Ջամալ Չան, դու մի հատուտարիմ դեմօկրատ դինուոր ես: Քեզ չեմ մոռանայ: Լուր եմ ստացել Մոսկվայից, մի վեց ամսուց յեղոյզ պայթելու է ռուսական յեղափոխութիւնը: Ինձ նշանակել են ֆինանսների մինիստր: Քեզ չեմ մոռանայ, Ջամա՛լ Չան: Դու կը լինես իմ ապագայ կանանց հսկիչը:

— Ընկեր Շահազար, հարցուց Ջամալ, սիրով ու սարսափով, էդ պաշտօնի համար մի քան գեղչուելո՞ւ է ինձանից:

— Հանգիստ կա՛ց, Ջամալ Չան, մի քան էլ կ՛աւելացնենք քո վրայ, չենք գեղչի:

Ջամալ երջանիկ էր ու աւելի ուժով փարեցաւ գործի, այսինքն բեռնակրութեան, կողմնակի պրօպագանդի ու սիրոյ միջնորդութեան, «փողի համար չի, գաղափարի համար»:

* * *

Ընկեր Աշուղ Շահազար որպէս սիրահար:
Աշուղը երկու կուռք ունէր. փող և կին:
Փողի ճամբան գտած էր:
Կնկայ համար քալելու պէտք չմնաց:

Ընկերը կը բնակէր Ղալաթիա: Իր սենեակին պատացը կը բնակէր վանուհի մը, Տիկին Եղսօ անունով: Երեսնամեայ և երկու անգամ այրիացած: Կունտ ու կլոր ու ճարպագեղ: Պեխաւոր: Ձախ այտին վրայ խալ: Էրիկ ծեծող: Տունի հնդկահաւ: Շահազար սիրահարուած էր Եղսոյին, ի հարկէ գաղափարական սիրով: Ա-

երկրորդ Եղսօն էր. Եղսօ մըն ալ Կովկասէն կը ճանչնար.

— Եղսօները կրքոտ են լինում...

Շահազար սկիզբները իբրեւ հայրենակից մօտեցած էր Եղսոյին: «Լսել, խօսել»: Օր մըն ալ, սիրոյ անզուսպ նոպայի մը մէջ, խածաւ Եղսոյի թեւը և առաջարկեց միութիւն: Եղսօ, ցաւէն կատղած, պօռաց և ապտակեց իր սիրահարը: Ինքո՛յշ հովուերգութիւն: Այս անգամ Աշուղը ինքն ալ ցաւէն կատղած, պառկեցուց Եղսօն գետին, նստաւ անոր փորին վրայ ու սկսաւ երգել.

— Եղսօ ջան, սիրո՛ւմ եմ, Եղսօ ջան, մեռնո՛ւմ եմ... Եղսօ ջան, կ'ուտեմ քեզ, կ'ուտե՛մ... խելագարւո՛ւմ եմ, իմ քաղցր թռչնիկ...

Շահազար յուսահատող մարդ չէր: Ջամալի ձեռքով ամէն օր նամակ կը ղրկէր, հակառակ պատասխան չստանալուն:

Եղսօ կը փափաքէր ամուսնանալ և նոյնիսկ կը նախընտրէր Շահազարը, որպէս հայրենակից, գրողկարդացող: Միայն նիւթականի հարցն էր որ զինքը կը խորշեցնէր: Հետզհետէ սակայն տեսաւ փոփոխութիւններ, որոնք աշուղին գործին յաջողութիւնը կը մատնէին: Իր մէջ յամրաբար սկսաւ կազմաւորուիլ հաւանութիւնը: Օր մըն ալ, վարպետօրէն պատասխանեց գրաւոր.

Պարոն Շահազար,

կ'ասես միանանք: դու աղքատ, ես աղքատ: Էսպէս միանալ լաւ բան չի: խնդրեմ հանգիստ թող ինձ:

ԵՂՍՕ

Աշուղը ուրախացաւ: Ուրեմն եթէ «փող աշխատէր» Եղսօն պիտի չմերժէր զինքը: «Ուրեմն հարկ է մի լաւ կողոպտել հոսհոսներին», մտածեց Աշուղը:

— Այո՛, հարկ է կողոպտել հոսհոսներին, նրանք շատ փող ունեն, հարկ է մի քիչ թեթեւացնել նրանց, գաղափարի համար, ի հարկէ:

Շահազար գօտեպնդուեցաւ։ Զարկաւ ամէն դուռ, մտաւ ամէն խանութէ ներս, շրջեցաւ եկեղեցիներու, հանդէսներու և արճարանները բոլորտիքը, թափառեցաւ թաղէ թաղ, գիւղէ գիւղ, ճառեց, շլացուց, արտասանեց ու կրցաւ ահագին գիրք ծախել։ Սպառումը այնքան սաստկացաւ, որ ստիպուեցաւ իր կարգ մը գործերը վերատին տպագրել, հազարներով։ Ունեցաւ գործեր՝ որոնք նոյնիսկ երրորդ տպագրութեան արժանացան։

* * *

Այդ թափառումներուն ժամանակ, օր մը, արճաճանի մը մէջ գտաւ Կովկասցի քանի մը ընկերներ։ Հին խաչագողներ։ Շատ նեղ օրեր ապրած միասին, նոյնիսկ բանտերու մէջ... յանուն գաղափարի։ Հիմակ ամէնքն ալ լաւ էին։ Օամ. Սահմանադրութեան արտերուն մէջ որո՞ւ տեղ չկար։ Խրտուիլակներ, մահճակալներ, կարիճներ հանդէս էին սարքած։

Շահազար իր հին ընկերներէն առաջարկ մը առաջաւ.

— Շահազար, շաբաթ երեկոյ ե՛կ մեզ մօտ։ Ընկերական սեղան ունենք։ Թիֆլիզի քէյֆ, հէյ, յիշո՞ւմ ես Հալաբարը...։ Դու կը լինես մեր թամադան...։ Անիծա՛ծ, լաւ ես խօսում...

— Կը գամ, ընկեր Չան, ես էլ ուզում եմ մի լաւ հարբել։ Գործերս կարգին են, բայց հէրն անիծած մի արտի գործ ունեմ, եօլա չի գնում...

— Էլի՛ կինարմատների հետ ես... ախր ականջ մի՛ տուր կանանց, մի լաւ կողոպտիր էս փուճ հոսհոսանեին ու գնանք Թիֆլիզ։ Էնտեղ կին էլ կայ, գինի էլ։ Մենք էլ լաւ փող ենք աշխատում։ Փախցնում ենք բուրժուանների երեխաներ ու փրկանք ենք ստանում։ Սօցիալիզմը վկայ, կինարմատների հետ դեռ գործ չենք ունեցել։ Դեռ մի երկու հազար դարնելուց յետոյ մի լաւ քէյֆ էլ կ'անենք ու հայդէ՛ Բաթում։

Շահազար առաւ անոնց հասցէն ու տխրութեամբ հեռացաւ։ Ինքզինքը ճարպիկ մարդ կը դաւանէր,

բայց տեսնելով այդ խումբը մը անզրաղէտ մարդոց մեծ յաջողութիւնները, նախանձեցաւ և ինքզինքը անճարակ զգաց։ Այս համոզումը խորանալով, տխրութիւնն ալ լայննալ սկսաւ իր մէջ։ Ի վերջոյ մխիթարեց ինքզինքը խորհելով.

— Նրանց ճանապարհի վրայ վաղ թէ ուշ փոս կը լինի, մինչ իմ գնացած ճանապարհը թէեւ մեծ մեծ օգուտներ չի տալիս, սակայն ապահով է, անվերջ է, նոյն իսկ փառք էլ կայ։

Շաբաթ երեկոյ Շահազար յարգեց իր խոստումը։ Լաւ պատուասիրուեցաւ։ Գինի, աղանդերներ, ճաշ, նուագ, երգ, պար եւայլն։ Կէս գիշերին իր թամատայի պաշտօնը աւարտեց ու սկսաւ ծխել ու երազել Եղսօն։ Գաղափար մը յղացաւ։ Առաւ թուղթ ու մատիտ և մէկ շունչով գրեց տատներկու ոտանաւորներ, «Սրտիս վէրքեր»ը վերատառութեամբ կնքեց, ու կարգաց իր ընկերներուն։ Մեծ խանդավառութիւն։ Մէկը գինքը նմանցուց Սայաթ Նովայի, ուրիշ մը Պուշկինի։ Բաժակներ պարպուեցան բանաստեղծին կենացը։

— Հուռա՛...

— Ես էս քերթուածներով կը փշրեմ Եղսոյի սրտի ժայռը, մտածեց Շահազար։

* * *

«Սրտիս վէրքեր»ը քանի մը օր վերջ ստացաւ ու Ջամալի ձեռքով ղրկուեցաւ մուսային՝ Տիկ. Եղսոյին։

— Ընկերուհի Եղսօ, ընկեր Շահազարը քո վրայ երգեր է գրել։ Ահա էս գիրքը։ Քո անունն էլ մէջը գրուած է։ Սա մի մեծ պատիւ է քեզ համար։ Կարդա՛ ու լաւ մտածիր քո անելիքը։ Վերջը կը փոշմանես։ Մի հոսհոս բուրժուա ուզում է իր աղջիկը տալ ընկեր Շահազարին, բայց մեր ընկերը չի համաձայնում։

Երբ Ջամալ դուրս ելաւ՝ Եղսօ անզուսպ հետաքրքրութեամբ, կղպելէ վերջ սենեակին դուռը, բացաւ գիրքը։

Ներքին կափարիչին վրայ կարդաց հետեւեալ ձօնը.

«Իս փնջիկը նուիրում եմ իմ երաժնների հիւրիվէրի Եղսօ Չանին:»

Փա՛ռք...:

Շարունակեց ընթերցումը, քանի առաջացաւ, այնքան ուռեցաւ, հնդկահաւի նման, վերջին էջին մազ մնաց որ պայթէր: Ուրախութենէն կերակուրը մոռցած էր խոհանոցը, կրակին վրայ: Փափաք մը զգաց ընկեր Շահազարին վիզը նետուելու և անոր շրթունքներէն կախուելու: Զսպեց ինքզինքը ու սկսաւ խորհիլ.

— Շահազար շատ փող չունէ, բայց այսպէս պատիւ փողով չեն տար:

Կարելի է քանի անգամ կարդաց գիրքը: Նոյնիսկ անգիր սորվեցաւ հետեւեալ չնաշխարհիկ քառեակները ու լացաւ.

Եղսօ Չան, քեզ խուրպան,
Դու ճարպի մեծ աման,
Եղսօ Չան, քեզ խուրպան,
Աշուղի գերեզման:

Եղսօ Չան, ես մեռայ,
Դու քար ես իմ վրայ,
Մի՛ կոխիր իմ վրայ,
Եղսօ Չան, ես մեռա՛յ:

Եղսոյի սրտին դուռը լայն բացուած էր ու անկէ առօք փառօք ներս էր մտած քնարակիր մը՝ ընկեր Աշուղ Շահազար: Գիրն ու գրիչը ի՛նչ հրաշքներ կը գործեն... գաղափարի համար:

*
* *

Օր մը վերջ Շահազար անցաւ հայելիին առջեւ: Մաքրուեցաւ, ածիլուեցաւ, յարդարուեցաւ ու հագաւ նոր զգեստներ: Վառեց սիկարէթ մըն ալ ու շատ չանցած Եղսոյի տեսեակն էր:

— Բարեւ, Եղսօ Չան:

— Աստուծոյ բարին, պարոն Շահապար:

— Կարո՞ղ եմ մի երկու խօսք ասել:

— Այո՛, բայց չխաճնես իմ թեւս: Երեք օր ցաւ քաշեցի:

— Ցաւդ տանիմ, Եղսօ Չան: Ես եկել եմ լուրջ խօսք ասելու:

Շահապար նստաւ Լուսթիւնն:

— Եղսօ Չան, մեռնո՛ւմ եմ...

— Ի՛նչպէս մեռնում ես. ամէն ժամանակէ աւելի ոտք ես...

— Եղսօ Չան, հոգիս ներսից տանջւում է:

— Ինչի՞...

— Ախր, պիտես է՛... այրւո՛ւմ եմ... Մտիկ արա, Եղսօ Չան, փող աշխատում եմ, գործս լաւ է գնում, ուզում եմ լինել մի կարգին մարդ, մի բոյն շինել: Ես հոսհոսների նման չեմ: Ախր ինտելիգենտ մարդ եմ: Դու վանեցի, ես վանեցի, եկ կապեր քո գլուխը իմ գլխին ու գործնի... Ես գաղափարի համար եմ խօսում...

— Պարոն Շահապար, ի՛նչ բաներ կը գրես ինձ համար: Ես այրի կին, այստեղ Պոլիս, իմ բարեկամներ, թշնամիներ ի՞նչ կ՛ասեն:

— Եղսօ Չան, մատաղ լինեմ քո բերնին, դու է՛լ այրի չես: Մի՛ նեղանայ, ի՛նչ անեմ, տանջւում եմ, գրում եմ որ մոռանամ տարտերս: Ես գրող բանաստեղծ մարդ եմ: Գրում եմ փողի ու գաղափարի համար: Իմանում եմ որ առանց փողի գաղափարը փուճ է: Դու էլ լաւ ես իմանում: Ախր չէ՞ որ վանեցի ենք, մենք լաւ ենք հասկացել աշխարհը: Դու գրեցիր, Եղսօ Չան, թէ «ես աղքատ, դու աղքատ», այժմ լաւ փող եմ աշխատում, հաւաքել եմ մի յիսուն ոսկի, էնքան էլ մի քանի ամսից կը հաւաքեմ: Իմ գրքերը ծախւում են: Ես հոսհոս բանաստեղծների նման օդի համար չեմ գրում, ես գրում եմ փողի ու գաղափարի համար: Թեզ հետ միացած լինելով ես շատ կը ներշնչուիմ ու կը գրեմ նոր երգեր: Իմ երգը մութ չի, իմ

երգը ծաղիկ ու գափնի է քեզ համար: Քեզ հետ միա-
սին կը լուսանկարուենք: Էդ լուսանկարը կը տպենք
մի գրքի մէջ, տակն էլ կը գրենք էսպէս՝ «Բանաս-
տեղծը և իր մուսան», և երբ Պոլսի փողոցներով անց
կը կենաս, բոլորը քեզ մատնացոյց կ'անեն, Եղսօ
Չան, ու կ'ասեն. «Սա՛ է բանաստեղծ Շահազարի սի-
րեկանը, բ՛նչ գեղեցիկն է»: Լուսանկարն էլ էսպէս
կ'անենք. դու կը նստիս թախտի վրայ, ես քո առաջ
ծնկաչո՛ք քէմանչա կը զարկեմ ու կուլամ: Պոլսի
հոսհոսուհիներ իրանց կեանքը կը տային էս փառքի
կէսի համար: Ես քեզ սիրում եմ, Եղսօ Չան, մի՛
մերժի ինձ: Թէ մերժելու լինես, քո անունը կը յի-
շուէ անէծքով, դու կը լինես հայ դրականութեան
Յուդա ու Վասակ: Իսկ թէ չմերժես, դու կը լինես
անմահ հրեշտակ...

Շահազարի այս դիւթական ճառը խոր տպաւորու-
թիւն գործեց Եղսոյի վրայ: Շահազար առիթէն օգ-
տուելով, ծունկի եկաւ ու մտաւ Եղսոյի լայն արուն-
ներուն մէջ երգելով.

— Եղսօ Չան, մի՛ մերժի... քո ոտներն ընկած
աղաչում եմ, մեռա՛յ է՛, մեռա՛յ...: Քեզ Վանայ թա-
գուհի կը շինեմ, Վասպուրական աշխարհի աստղ...

Եղսօ իր ամբողջ ճարպեղէն մարմնով կը թրթռար
երանութեան մէջ: Աչուղը վեր սողոսկեցաւ ու տղրու-
կի պէս փակաւ Եղսոյի քթին բերնին:

Կենդանի պատկեր:
Ռօմէօ Ժիւլիէթ:
Ցարհատ ու Շերին:
Հովուերգութիւն:
Գաղափարի հաւատ:

*
* *

Ընկեր Աշուղ Շահազար որոնեց կոյս շահատան-
ներ: Գտաւ: Ալէմ Տաղի: Օր մըն ալ Ջամալի հետ
Սկիւտար եկաւ ու հետիոտն Ալէմ Տաղիի ճամբան
բռնեց: Օդափոխութեան շրջանն էր: Վերադարձին

պիտի ամուսնանար: Ճամբան որոճաց նոր ճառեր, աւելի պիրք ծախելու համար:

*
* *

Ալէմ Տաղի:

Գիւղ մը նշանաւոր իր անտառներով ու անմահական ջուրերով:

Ժողովուրդը կ'այցելէր Ս. Նշան եկեղեցին, օր մը թաշտէլէն, ուրիշ օր մը ֆիւչիւք էլմալը, ուրիշ օր մըն ալ պէօյիւք էլմալը: Ամէն տեղ դաշտատօներ: Փող ու թմբուկ, խորոված, օղի և անտառներու մէջ լէյլանե՛ր, Մէճնուննե՛ր...

Լուր մը: Կայծա՛կ:

— Իմացա՞ք, Աշուղ Շահազար Ալէմ Տաղի է:

— Պռավօ՛...

Ուրիշներ.

— Ո՞վ է Շահազարը...

Բանպէտ մը.

— Ամօթ է, եղբայր, չե՞ս ճանչնար: Կովկասէն եկած մեծ յեղափոխական մըն է, մեծ ալ գրող է: Շատ գիրքեր ունի: Խըլյախ բաներ են: Շատ համեատ մարդ է, քիչ մըն ալ տէրվիշ, փարայի կարեւորութիւն չի տար, գաղափարի համար աշխատող է...

Այդ միջոցին ընկեր Ջամալ Իվան Տէր Թաթոսեանց իր մունետիկի դերը կը կատարէր «երկիւղիւ և հաւատով»:

Աշուղը խորհրդաւոր ըլլալու և մեծ տպաւորութիւն գործելու համար երկու օր բնաւ չերեւցաւ հասարակութեան, բանտելով ինքզինքը ախոռանման սենեակի մը մէջ: Ջամալ կկոցի պէս կ'երթեւեկէր:

Վերջապէս կիրակի առաւօտ մը, ընկեր Շահազար դիրք բռնեց Ջամալի հետ Ս. Նշան եկեղեցւոյ մուտքին առջեւ: Շարուեցան գրքերը, հաւաքուեցաւ մեծ բազմութիւն մը: Եկեղեցիին մէջ մարդ չէր մնացած, ամէնքը խռնուած էին նոր մարգարէին բոլորտիքը: Շահազար իր որսերուն առատութիւնը տեսնելով հազաց ու սկսաւ գործի.

— Բարե՛ւ եմ ասում ձեզ, ընկերներ և ընկերուհիներ, բարե՛ւ... բարեւ ասելէ վերջ ձեզ հրամայում եմ ծափահարել...

Ամբողջ հասարակութիւնը ակաւ բուռն ծափահարութեան մը: Ծափերը ուժեղցան, երկարեցան, լայնցան ու փոթորիկի նման բարձրացան: Ընկեր Ջամալ գլխով ու ոտքով կը հրահրէր ծափահարողները խանդը: Վերջապէս ամէն ո.ք յոգնեցաւ ու լռեց:

Լռեց և ինքը Աշուղը: «Պաուզա»: Ու յանկարծ.

— Ընկերներ և ընկերուհիներ, մի՛ անդամ էլ ծափահարեցէ՛ք...

Նոր խանդ, նոր եռանդ, ծափահարութիւն մը եւս պայթեցաւ՝ ներսը եկեղեցւոյ արարողութիւնը խափանելու աստիճան: Լռութիւնը եկաւ նստաւ ծեծուած ափերու վրայ: «Պաուզա»:

— Ընկերնե՛ր և ընկերուհինե՛ր, ձեզ ասում եմ մի երրորդ անդամ էլ ծափահարեցէ՛ք:

Հասարակութիւնը իր վերջին ոյժը հաւաքած անդամ մըն ալ ծափահարեց կատաղօրէն: Ջամալ իր բաբախը օդին մէջ կը խաղցնէր խանդավառուած: Երբ ամէն ձայն դադրեցաւ, Աշուղը ծալլեց իր թեւերը կուրծքին վրայ ու քարէ արձանի նման կանգնած մնաց:

Ամէն ո.ք յուզուած, ելեկտրականացած էր ու անշշուկ կը սպասէր պատգամներու: Վայրկեան մը տեւեց այս վիճակը.

— Ընկերնե՛ր, ընկերուհինե՛ր, էս ծափերը մի մի շառաչուն ապտակներ են Ցարի երեսին...

— Հուռա՛, պռավո՛, կեցցէ՛...

Ու նոր, աւելի ուժգին, աւելի բարբարոս ծափահարութեան ալիք մը փշրեց լռութիւնը:

— Ընկերնե՛ր, Մեսեխի բանտում, Սիբիրի աքսորավայրում հազար ու հազար յեղափոխականներ հրճուեցին էս բոպէիս: Նրանց կողմից եմ գալիս: Նրանց դաղափարական արեւն եմ բերել ձեզ: Օգտուեցէ՛ք առիթից: Վերցրէ՛ք էս բրոշիւրները: Վաթսուն

փարա, երկու դրուշ, հարիւր փարա: Մ'իանդամընդմիշտ և բարձրաձայն յայտարարում եմ, փողի համար չի, գաղափարի համար:

Եւ ինչպէս սովածներու խումբ մը կը յարձակի փուռի մը վրայ, այնպէս ալ հասարակութիւնը նետուեցաւ պրքերուն վրայ: Ու գնեցին, գնեցին:

Աշուղը առուտուրէն վերջ մտածեց.

— Իսոեղ հող կայ, էստեղ փող կայ...:

*
* *

Թաշտէլէն:

Դրախտի ձորակ մը, ամփիթատրոնի ձեւ: Մէջտեղը երկու քայլնոց գետնուղի մը, ուրկէ կը հոսի Չուրը իր մոգական արծաթով, իր երգով ու պարով:

Ձորակին վրայ խումբե՛ր, խումբե՛ր՝ նստած ծալլապատիկ, ընկողմանած, պառկած: Նուագներ: Փոքրիկ խարոյկներու վրայ մորթատերծ ոչխարներ կը ճենճերին: Շամփուրով մխեր կը խորովուէին: Օդին հաշիշային բուրմունքը կը զգլխէ: Գինովներ բացագանչութիւններ կ'արձակեն: Կատարեալ հեթանոսութիւն:

Յանկարծ բարձունքի մը վրայ նոր Մովսէս մը երեւցաւ, նոր Ահարոնի մը հետ:

— Ընկերնե՛ր և ընկերուհինե՛ր, եկել եմ օրգանիզացիայի համար: Պրոլետարնե՛ր բոլոր երկիրներէ, միացէ՛ք: Ամէնքը մէկի համար, մէկը ամէնքի համար: Փողի համար չի, գաղափարի համար: Համաշխարհային Սօցիալ-Դեմոկրատիան խօսում է իմ բերանով: Հայաստանում, Պարսկաստանում, Կովկասում, Ռուսաստանում, Սիբիրում, մինչեւ Եապոնիա, մինչեւ Ովկէանոս ու Ովկէանիա ես կազմակերպել եմ մարդկանց իմ ճշմարտութեան ձայնով, իմ բրոշիւրներով: Արքաների պալատների առաջ, գործատուններուն հրապարակներում, մինչեւ պանդուխտի խանների անկիւնները ես գորգոռացել եմ ճշմարտութիւնը: Ինձ բանտարկել են, ածքորել են, շղթայել են, բայց չեն կարողացել խեղդել իմ մէջ յեղափոխական ոգին:

Ես արեւը բռնել եմ և ինձ հետ մատն եմ ածել երեք աշխարհներ, եօթը երկիրներ ու քառասուն քաղաքներ: Նիգիլիզմի վեթերան Հերցէն իր «Կօլօկօլ» օդապնով ոսքակոծեց ամբողջ ռուսական իմպէրիալիզմը, ողջ մի դար: Նրա բրոշիւրները լոյս ցանեցին մտքերի մէջ: Մի հսկայական կուլտուրա առաջացաւ էտ սահմաններում: Ջահե՛ր: Դաստաեւսկի, Տուրգենէֆ, Չէրնիկովսքի, Գորկի, Տալստոյ: Ես էլ եկել եմ բրոշիւրներով ու լոյս եմ բերել: Բացէ՛ք ձեր գանկերը, ես ուզում եմ ցանել: Ձեզնից ես կը ստեղծեմ նոր Գորկիներ ու Տալստոյներ: Օգտուեցէ՛ք առիթից: Վաթսուն փարա, երկու դրուշ, հարիւր փարա: Բարձրաձայն յայտարարում եմ, փողի համար չի, պաղատարի համար: Ո՞վ է ցանկանում...

— Ե՛ս... հո՛ս... հո՛ս... ինձի՛... մեզի՛ ալ... կեցցէ՛ ընկերը...

— Ընկեր Ջամալ, վերցրու գրքերը և հետեւիր ինձ:

Փառաւոր առուտուր ունեցաւ և իր հռետորութիւնը պատցուց խումբէ խումբ: Տասը տեղէ հիւրասիրուեցան: Օղի, ձուկ աղի, դարեկուր, կերակուր և ամենակարեւորը՝ փո՛ղ...

Գաղափարի համար:

Աշուղը աստուածացած էր:

Հայ գրականութիւնը աննախընթաց պատիւներու արժանացաւ: Գաղափարը հրաշք կը գործէ: Շահապար իր երջանկութենէն բռունցքի հարուածներ կուտար Ջամալին: Այս վերջինին փորը առաջին անգամ ըլլալով լաւ մը կշտացած էր, սակայն Աշուղը որոշեց երկուք ու կէս դրուշ գեղչել ամսականէն, իր շնորհիւ կերածներուն համար:

Մի գաղափար:

*
* *

Քիւչիւք Էլմալը:

Դաշտատօն, նուագներ, պարեր, խորոված մխա, օղի և Աշուղ Շահապար իր Ջամալով: Երբ Աշուղ մուտք

գործեց դաշտատօնէն ներս՝ ամէն կողմէ պռաւօ՛ մը պայթեցաւ։

— Ճա՛ռ կ՚ուզենք, ստանաւո՛ր... ե՛րգ, պա՛ր... կեցցէ՛ ընկեր Աշուղը...

Աշուղը բարձրացաւ աթոռի մը վրայ և իր սահմռկեցնող քերթուածներէն հետևեալը արտասանեց.

Հէ՜յ ընկերներ, նոր կարգի,
Ջահեր առէք ու ոտքի:
Մտիկ արէք Թանկագին
Իմ խօսքին:
Շուտ վերցրէք դուք ցասումի մի շեփոր,
Ու խփեցէք բուրժուաներին հաստափոր...
Շուտ վերցրէք բոմբա, տէրօր,
Բահ ու արօր,
Ջարկէ՛ք ուժգին՝
Խոզի գլխին:
Տօն է այս օր Աշխատանքի,
Ու Հեշտանքի:
Ընկերութիւ եղսօ ջան՝
Մեզ չի կոչի դաւաճան:
Սօցիալիզմ ու եղսօ ջան
Կեցցեն յաւէտ, յաւիտեան:

Ծափահարութիւններու և պռաւօներու ուռական մը պայթեցաւ։

— Պռաւօ՛, պի՛ս, պի՛ս։

Եւ աղմուկին մէջ՝ յանկա՛րծ

Պա՛մ...

Ատրճանակ մը։

Աշուղը ինկաւ գետին։

Իրարանցում։ Աղմկողներ ու լռութիւն յանձնարարելով ուրիշ աղմկողներ։

Լոյս։ Սօցիալ-դեմօկրատ ընկեր մը վերացած Աշուղին քերթուածէն օդին մէջ պարպած էր ատրճանակը։

Աշուղը ոտքի ելաւ։

— Ջամալ Լան, կարծում էի թէ մեռայ... գաղա-փարի համար:

Աշուղին մօտեցան և զայն սեղան հրաւիրեցին:

Ան ճառելով խմեց ու առուտուր ըրաւ: Ուրիշ սե-ղանէ մըն ալ կանչեցին: Նոյն արարուածը: Երրորդ, չորրորդ: Կե՛ր, ա՛րբ և ծախէ: Վերջին հրաւիրողնե-րուն քով չափէ դուրս շատախօսեց ու սկսաւ երգել: Ջամալ ալ լէզգինկա պարեց: Ամբողջ բազմութիւնը քոլորուած էր հերոսներուն շուրջ: Խեղկատակութիւնը փեռուր զգեցաւ: Տավուլ, զուռնա, քէյֆ... յանուն գաղափարի:

*
* *

Շաբաթ երեկոյ:

Ալէմ Տաղի գիւղին դրեթէ ակիզբը, անկիւնի քեր-նի բացօթեայ մեծ գարեջրատունը: Սեղանները ամ-բողջովին պաշարուած Բադոսի երկաեռ խնկարկուն-երով: Բազմաթեւ Զուարթութիւնն ու բազմալեզու Ձա-ճոյքը իրենց տեսքն ու ձայնը բերած այս եղեմական օթեակին մէջ: Սեղաննե՛ր, սեղաննե՛ր, որոնց վրայ աղցանի թրթռուն ածուներ, աղանդերի պարտէզներ, իւղի-քացախի լճակներ, լեցուն ձկնիկներով, ուրիշ լճակ մը իւղի-քացախի՝ հաւկիթէ կոնատոլաներով, սեւ ձկնկիթի կղզեակներ, ոստրէի աստղիկներ, լուբիայի բլրակներ, օղիի աւազաններ ու գարեջուրի շատ-րուաններ: Ու կլկլակներու միօրինակ նուագահանդէս մը որ կ'արձակէ խորհուրդի ամպիկներ: Դեռ մանա-ւանդ արեւելանուագը որ կը նուագի, կը նուագի, կը լայննայ, կը լուծուի, կը հալի...

Մուհամմէտի խոստացած Արքայութիւնն է:

Յանկարծ այս Արքայութենէն ներս կը խուժեն երկու սադայէլներ:

Մեր մինուճար հերոսներն են՝ Շահապար ու Ջա-մալ:

Խանդավառութեան ալիք մը կը բարձրանայ այս թմրեցուցիչ մթնոլորտին մէջ, կ'անցնի սեղաններուն վրայէն՝ բոլոր գլուխները գաղթօրէն օրրելով:

Աշուղին կախարդանքն է։

Շահազար իբրեւ օրուան հերոսը ու վաճառականը կը ակսի մտերմաբար ճառճռել.

— Բարե՛ւ, ընկերներ և ընկերուհիներ, իմ վերջին երկերն եմ ստացել Պոլսի տպարաններից։ Յնցող նուրբութիւններ, յայտնութիւններ, միջազգային պլուխգործոցներ։ Չեղչով եմ ծախում։ Հարիւր փարա։ Փողի համար չի, գաղափարի համար։

Պարտէզին խորի անկիւնը, մարդ մը, երկու սեղաններ իրար միացուցած, իր շուրջը հաւաքած ազգականներ, բարեկամներ, կը կոնծէր ու քէյֆ կ'ընէր։ Անունն էր Զաքըր։ Բարձրահասակ, թիկնեղ, լուսնկայ ու հաղրեվարդ դէմքով հսկայ մը։ Պոլսէն։ Հիւսուածեղէնի վաճառական։ Ազգայինճի։ Զաքըր չէր ախորժած Աշուղին կասկածելի դիբէն, մանաւանդ անոր «փողի համար չի, գաղափարի համար» յանկերգէն։ Օրի մը պարպեց, օրի մըն ալ, ու ատենատրեան ձայնովը գոռաց.

— Միւսիւ Շահազար, կը հաճի՞ս վայրկեան մըն ալ հոս գալ...

Աշուղը բղաւեց.

— Գլխիս վրայ, աչքիս վրայ, աղա Չան, հիմի, էս բոպէիս...

Եւ, իրաւ, րոպէ մը վերջ Աշուղը Զամալին հետ կանգնած էր Զաքըրին դիմաց։

— Գործերը ի՞նչպէս են, հարցուց Զաքըր։

— Վատ չի, պարոն Չան, կարեւորը փողը չի, գաղափարն է։ Մենք պրոպագանդի համար ենք աշխատում։ Ուրախ եմ յայտարարելու որ Բերայից Գալաթիա, Գալաթիայից Պոլիս, էնտեղից ալ մինչեւ Եէտի Գուլէ, ու տակաւին Սկիւտար, Թօփ Թաշ, Ալէմ Տաղի առաստ առաստ սերմ եմ ցաներ։ Փողի համար չի, գաղափարի համար։

Զաքըրի համբերութիւնը ցամքեցաւ։

— Այս մարդուկը մեզ կատարեալ աւանակի տեղ դրած է, խորհեցաւ։

Յանկարծ, մտածում մը արթնցաւ իր մէջ։

Յիշեց որ հին օրերու մէջ երբ հայ փաշաներ, հայ մեծատուններ օդափոխութեան ու կերուխումի կու գային Ալէմ Տաղի, աւանդական սովորութեան մը համաձայն կը կազմակերպէին հրդեհներ։ Տուն մը կամ խանութ մը կ'այրէին, գինին կրկինն ու եռապատիկը նախապէս վճարելով տիրոջը։ Առնուազն կը հրդեհէին քանի իրարու վրայ դիզուած կառքեր կամ հարիւր ախոռներ, քարիւղի լոգանքէ մը վերջ։ Բոցը կը բարձրանար մինչեւ կամար, ու այդ հրդեհին լայնածաւալ ու շողշողուն լոյսին մէջ, հեթանոսօրէն ներծնացած, սեղաններ կը նետէին, նուագարաններու քաջալերութեամբ։

Ի՛նչ հրաշալի պիւտ։

— Պայուսակիդ մէջ ամէնը քանի՞ ոսկիի պէրք ունիս, հարցուց Ջաքըր։

— Ախր չեմ հաշուած։

— Հաշուէ տեսնենք, պիտի գնեմ։

— Այսինքն, պարոն Չան, մի երկու ոսկիի պէրք կը լինի մինիմում։

Իրականին մէջ հազիւ 60 ղրշ.ի պէրք։

— Ատ սա չորս ոսկին, թափէ գրքերը գետինը։

— Գրքերը կը կեղտոտուեն, գնեմ մի ախոռ վրայ։

— Քեզի ըսի, գետի՛նը թափէ։

Աշուղը Ջամալին հրամայեց որ թափէ գետին։

Գրքերը թափուեցան։

— Հիմակ, ա՛ռ սա լուցկին, վառէ ու ձեռքովդ բոնկցուր գրքերը։

— Դո՞րդ ես ասում, հարցուց Շահազար։

— Դորդը մորդը աս է։ Հրամմէ լուցկին։

— Ախր դա արբանպծութիւն է։

— Չե՞ս վառեր... Ե՛տ տուր չորս ոսկին։

— Այսինքն, եթէ ուզում էք, կը վառեմ էլի՛... Ես պաղպաիարի համար եմ աշխատում... Սա էլ մի պաղպաիար է և վատ պաղպաիար չի...

Ու լուցկին վառելով մօտեցուց պրքերուն։

Ջամալ խենթի նման բռնեց Աշուղին թեւէն։

— Ի՞նչ ես անում, ընկեր։

— Հանդիստ կաց, էշու հրեշտակ, քո բանը չի...

Ու պրքերը հրդեհեց... Գոյնզգոյն բոցե՛ր...

Աշուղը կծիկը դրաւ, չորս ոսկին պրպանած... դա-պափարի համար։ Ջամալ ապուշ ապուշ հետեւեցաւ իր տիրոջ։

Շահազար դռնէն դուրս սպրդած պահուն, մէկը բռնեց իր օձիքէն։

— Ուրիշ գիրք չունի՞ս։ Ես ալ այրել կ'ուզեմ։ Քեզի երեք ոսկի կայ։

— Վա՛յ հէրն անիծած, գոչեց Շահազար, չունեմ դժբախտաբար, պարոն Չան, սակայն անհոգ կա՛ց, տարա մի՛ արա, մի քանի օրից քեզ էլ բաւարարութիւն կը տամ...

Մարդը հեռացաւ։

Աշուղը դարձաւ Ջամալին.

— Է՛յ Ջամալ, էստեղ բոլորը յիմարացել են։ Ղորդ որ էս հոսհոսանների մէջ լօթի տղերք էլ կան։ Ես սրանց հետ լաւ գործ եմ ունենալու։ Իսկ քո գործը, Ջամալ Չան, վաղն առաւօտ կանուխ վեր կը կենաս և տապանակ ուխտի կը գնաս Սկիւտար, այնտեղից Պոլիս և ուղղակի Սարդարեան, Մարթարեան դրա-խանութները։ Էնտեղից քեզ կը յանձնեն հին ու փո-շոտ Սաղմոսներ, Աւետարաններ, Սաղմոսածաշունչ և բոլոր կրօնական գահրումար պրքերը, որոնք թէ էժան են և թէ խոշորակափ և վաճառելու համար պէտք-ական կը գան։ Կը գնաս նաեւ Պայպըլ Հաուզ՝ բողոք-ականներին և այնտեղից էլ կը վերցնես էդ գահրումար պրքերից։ Կ'ասես բրոբագանդի համար է, կ'ասես ու-զում ենք աւետարանական բրոբագանդ անել։ Գուցէ ձրի էլ կը տան։ Ես վաղը քեզ կը յանձնեմ երեք նա-մակ՝ գրուած... գաղափարի համար։

*
* *

Յաջորդ շաբաթ իրիկուն։

Գիւղին արեւմուտքը, ճամբուն վրայ, դղեակ մը կար: Օդափոխութեան եկած մայրեր, կիներ, աղջիկներ, փոքրիկներով, շաբաթ երեկոյները այդ դղեակին մօտերը կը հաւաքուէին դիմաւորելու Պոլսէն եկող իրենց գործի մարդերը, հայր, ամուսին, զաւակ, եղբայր: Իւրաքանչիւր խումբ իր սպասած սիրելիին կառքին վրայ կը վազէր: Համբոյրներ, ուրախութեան կանչեր:

Կառքերը կամաց կամաց վերջացան ու բազմութիւնը վերադարձաւ գիւղ:

Մէկը սակայն դեռ հոն կը սպասէր, մտատանջ, մացառներուն մէջ պահուըտած: Կը սպասէր ընկերոջ մը գալստեան... յանուն դաղափարի: Հասկցաք անշուշտ որ սպասողը Աշուղն է: Զամալ շաբաթ մըն է չէր երեւցած: Աշուղի տագնապի մէջ էր: Այդ դիշեր կրնար հինգ տասը ոսկի կորնցնել եթէ Զամալ չը հասցնէր իր ապսպրանքները: Աշուղը ճամբուն մէջ կանգնեցաւ յուսահատ: Յանկարծ ճամբուն ծայրը սեւ կէտ մը նշմարեց: Զամալին բաբախը: Վազեց: Իսկ և իսկ Զամալն էր, էշ նահատակուած ահագին պարկի մը ծանրութեան տակ: Կ.ուն, լեզուն դուրս ինկած, հոգին բերանը, քրտինքներու մէջ:

— Տօ՛, տնաշէ՛ն, ո՞ւր մնացիր, կասկածանքից մեռայ է՛...

— Ընկեր Չան, ախր սրանք պրքեր չեն, դերեզմանաքարերի նման ծանր են:

— Հոգ մի՛ արա, Զամալ Չան, էս պիշեր մի լաւ վրէժ կը լուծենք էդ պրքերից, մի լաւ կրակի կը տանք... պաղափարի համար:

*
* *

Տեսարանը կը ներկայացնէ անցեալ շաբաթ պիշերուան բացօթեայ դարեջրատունը: Նոյն կարգ ու սարքը: Այնտեղ է Զաքըրը, իրեններով: Լուսանեակ պիշեր: Կը մտնեն Աշուղ ու Զամալ:

— Բարեւ ձեզ, ընկերներ և ընկերուհիներ։ Հսկայական պրքեր եմ բերել։ Բոցեղէն պրքեր, կրակի և պաղպաղարի համար...

— Շիտակ հո՛ս եկուր, միւսիւ Շահպազար, որոտաց Չաքըր։

Աշուղը Չամալին հետ պարկը քաշկռտելով մօտեցաւ Չաքըրին։

— Բարեւ, ընկեր Չան։

— Աստուծոյ բարին, խաչապող։ Ա՛ռ ի՞նչ է, պրքերը ածուխի պարկի մէ՞չ էս խոթել։ Թափէ նայինք գետինը։

— Բոլո՞րը...

— Բոլո՛րը։

— Չի կարելի. ես ապսպրանք եմ վերցրել մի ուրիշ պարոնից։ Կէսը քեզ, կէսը նրան։

— Ամէնը թափէ։ Քանի՞ ոսկիի բան է։

— Ախր շատ թանգ է։ Մի տասը ոսկի կը լինի։

— Թափէ՛...

Թափեցին։ Գրքի լեռ։

— Ա՛ռ սա լուցկին ալ ու վառէ։

Աշուղը կեցաւ։

— Հապա փողո՞րը...

— Ա՛ռ տասը ոսկին, հանած վարած, մէյ մըն ալ «փողի համար չի» եթէ պռոստ՝ քաշելիք ունիս ձեռքէս։

— Շնորհակալ եմ, պարոն Չան, մի՛ք նեղենայ, ըսելով տասը ոսկին գրպանեց։

— Վառէ՛ հիմակ։

Աշուղը լուցկի մը հանեց, զարկաւ տուփին, վառեց լուցկին, մօտեցաւ գրքի մը ու բռնկցուց։ Բոց մը ելաւ ու լուսաւորեց միւս գրքերուն կափարիչները։

Մարիամ տուտու, պառաւ մը, ակնոցը քթին, անուն մը աչքին երեւցած ըլլալով, շտկեց ակնոցը, մօտեցաւ ու փոթորիկ մը փրցուց։

— Քա վո՛ւյ, ծուները թէպիէիս, ողջ կլօխնիս քարին տակ կը դնէ կոր, քա աս շունը մեղի փարա-յովնիս դժոխքները պիտոր խաւրէ։ Մեղա՛յ Աստու-

ծուս, մեղա՛յ։ Զուլո՛ւմ։ Երկնքէն կրակ պիտոր թափի։ Կը մարիմ կոր, հաւէ՛ք։ Քա Աւետարանները կ՚երէ կոր։

Խումբ մը վազեց պառաւին վրայ։

Զաքըր դէպի խարոյկը նետուեցաւ, ստուգելու համար։

Աշուղ ու Ջամալ շշմեցան։

Պառաւը.

— Ճղիկ ճղիկ կոտրտիս, ճղակտոր ըլլաս, սիւրիւմ սիւրիւմ գաս, պատանքըզ էրթաս։ Գետնին եօթը խաթը անցնիս։ Ճէհէննէմ եղիր առջեւէս, աչքս չտեսնայ։

Մեծ իրարանցում։

Զաքըր մօտեցաւ Աշուղին։ «Մոմենտը կրիտիկական» էր։

— Վա՛յ քեզի չխպնած առաւփախաւ։ Գաղափարի համար հա՞... Ա՛ռ քեզի գաղափար, ըսելը ու շառաչուն ապտակ մը զարնելը երկվայրկեան մը չեղաւ։

Աշուղ ինք իր վրայ դարձաւ ու ինկաւ գետին։ Ոտքի ելաւ ու յարձակեցաւ Զաքըրին վրայ։ Այս վերջինը զայն գնդակի պէս վերցնելով, ցած ցանկապատին վրայէն դուրս նետեց։ Այս որ տեսաւ Ջամալ, քաշեց իր մէջքի դաշոյնը... յանուն գաղափարի։

— Դո՞ւն ալ, սատկած աքլոր, ըսելով Զաքըր, գրկեց Ջամալի մէջքէն ու զայն իր երկար հասակով, երկար չիզմէով ու բաբախով բարձրացուց օդին մէջ ու ցանկապատին վրայէն, նոյն ուղղութեամբ, նետեց դուրս։

Ջամալ ահաւոր անկում մը ունեցաւ ճիշտ ու ճիշտ Շահազարին վրայ ու իր ձեռքի դաշոյնը ուժով մը մխուեցաւ Աշուղին փափուկ մէկ մասին մէջ։ Շահազար կարծելով որ կատաղի Զաքըրն է որ իր վրայ յարձակած է դանակով՝ սկսաւ ամբողջ ձայնովը լալագին բղաւել.

— Մեղա՛յ քեզ... մեղա՛յ քեզ... մեղա՛յ... խնայի՛ր... Ահա ճիշտն եմ ասում... փողի համար է, գաղափարի համար չի...։

ՎԵՐՋ

ԿԱՐԳՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

ԲԱՆԻՈՐԸ (Հին Ջրոյց)

ՓԱՐԱՒՈՆ (երգիծավէպ)

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԳԻՍՏԸ (երգիծախաղ)

ՄԵՂՔԵՐՍ (քերթուածները)

Սոյն գիրքը ստանալու համար դիմել, Փարիզի մէջ, «ՅԱՌԱՋ»ի խմբագրատունը Պր. ԼԵՒՈՆ ԳԵՒՈՆԵԱՆի 208 bis Rue Lafayette.

Գաւառներէն ու արտասահմանէ դիմել Պր. ՎԱՀՐԱՄ ՍԵԻՈՒՆԻի՝ 5, Avenue Quihou, St. Mandé (Seine), France.

Եւ կամ հեղինակին՝ N. Béchiktachlian, 32, Rue du Pressoir, PARIS (20e).

Գին 5 ֆրանք - Արտասահման 25 սենթ